ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
3 հոկտեմբերի 2022 թվականի N 386 - L

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-14-Ը ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՐԱՆՑ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԿԱՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1468-Ն որոշումը, Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան և Տեղ համայնքներից ստացված «Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով հասարակական շենքերին պատճառված վնասների գնահատման ակտերը», ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 15-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 308 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի եզրակացությունը և Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի զեկուցագիրը՝

որոշում եմ.

1. Հաստատել՝ Ադրբեջանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը հայ-ադրբեջանական սահմանին Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով վնասված շենքերի, շինությունների վնասների գնահատման արդյունքում դրանց սեփականատերերին կամ բնակիչներին հատուցման ենթակա վնասի չափը՝ համաձայն հավելվածով նախատեսված բնակիչների կամ սեփականատերերի ցանկի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի

արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատուցել Ադրբեջանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը հայ-ադրբեջանական սահմանին Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով վնասված շենքերի, շինությունների վնասների գնահատման արդյունքում դրանց սեփականատերերին կամ բնակիչներին պատճառված վնասը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը հավելվածով նախատեսված քաղաքացիներին:

03.10.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

Ռ. Ղուկասյան

2022թ. հոկտեմբերի 3
ք. Կապան